ՀԱՅՔ 7(581) 17.01.1996 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Մարզական մեկնաբան

Խորհրդանշական հաղթանակներ



Մոսկվայում, Տիգրան Պետրոսյանի անվան ակումբում 10-րդ անգամ անընդմեջ անցկացվեց շախմատի աշխարհի իններորդ չեմպիոնի հուշամրցաշարը, որին մասնակցեցին պատանեկան թիմերը:

Փակման արարողության ժամանակ բարի խոսքեր ասվեցին Տիգրան Պետրոսյանի՝ մի անձնավորության հասցեին, որը շատ բան է արել ողջ աշխարհում, նախկին ԽՍՀՄ-ում հինավուրց այս մարզաձեւը մասսայականացնելու, երեխաների շրջանում տարածելու, նաեւ նրանց ունակությունները զարգացնելու գործում:

Խորհրդանշական է, որ այս ստուգատեսում հաղթող դարձավ Հայաստանի հավաքականը, որը վաստակեց 21 միավոր: Կես միավորով ետ մնացին Մոսկվայի դպրոցականների տան ներկայացուցիչները: Կարեն Ասրյանը, 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, գրավեց առաջին տեղը:

Մարզուհիների մեջ լավագույնը դարձյալ մեր հանրապետության ներկայացուցիչն էր: Ձեռք բերած 7,5 միավորով առաջինը ճանաչվեց Լիլիթ Մկրտչյանը:

Մեր երրորդ մասնակցի՝ Դմիտրի Հարությունյանի ցուցանիշն է 5,5 միավոր: